ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ անգլերենի դասի օրինակով:

Հետազոտող ուսուցիչ՝ Զոյա Գևորգյան

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Կրթական գործընթացում առաջացած արդի մարտահրավերները 4

ՏՀՏ գործիքները `որպես ուսումնական գործընթացի արդյունավետությունը..... 5

բարձրացնող միջոցներ 5

Անգլերենի դասավանդման համար ամենաարդյունավետ առցանց գործիքները ... 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ՕԳՏԱՎՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել արդի կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դերն ու կարևորությունը: Այս ուսումնասիրությունը կենտրոնանում է նոր տեխնոլոգիաների կիրառման դերի վրա անգլերենի՝ որպես երկրորդ/օտար լեզու սովորելու գործում: Կքննարկվեն տարբեր առցանց գործիքների կիրառումը դասապրոցեսին, դրանց արդյունավետությունը : Քանի որ գրքերն այսօր մղվել են երկրորդ պլան, և նոր տեխնոլոգիաների առկայությամբ դասերը կարող են լինել շատ ավելի հարուստ բովանդակությամբ և ավելի մասնակցային, քան նախկինում:

Մեր նպատակն է ցույց տալ, որ վիրտուալ գրատախտակները, համացանցում առկա անսպառ լեզվական ռեսուրսները, տեսահոլովակներ ստեղծելու հնարավորությունները անգլերենի դասերը վերածում են այնպիսի միջավայրի, որտեղ խրախուսվում են մտքերով կիսվելը, բանավիճելը, կարծիքներ ստեղծելն ու ձևավորելը: Արդյունքում ստեղծվում է մի տարածք, որը շատ ավելի ստեղծագործ և մասնակցային է:

Գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նոր տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը բարելավում է սովորողների լեզվի ուսուցման հմտությունները:

Ուսուցիչներին ներկայացնել կրթական տեխնոլոգիաների հնարավորությունները, որոնց շնորհիվ դասավանդողը շատ ավելի լավ պատրաստված կլինի՝ դասերը դարձնելով անմիջական և ակտիվ, որտեղ բոլոր աշակերտները հնարավորություն ունեն մասնակցելու՝ անկախ իրենց մակարդակից:

Կրթական գործընթացում առաջացած արդի մարտահրավերները

Եկե՛ք ազնիվ լինենք: Երբեմն ինչ-որ նոր բան սովորելու միտքը, հատկապես, եթե դա վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաներին , վախեցնում է մեզ, որի հետևանքով մենք հերքում ենք նրա՝ ուսուցման և սովորելու գործընթացում օգուտ բերելու փաստը: Երբ մենք երեխա էինք, այսքան տեղեկատվական տեխնոլոգիաներ չկային, և մեզ մոտ ամեն ինչ լավ էր ստացվում: Մի՞թե այդպես է: Արդյո՞ք մենք աշխատում ենք ՝ օգտագործելով մեր լավագույն պոտենցիալը:Արդյոք մեր աշխատանքը բավական է մեր աշակերտների համար և հիանալի արդյունք է ապահովում: Մենք պետք է ավելի բարձր նշաձող սահմանենք մեզ համար և գիտակցենք տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորությունը ուսուցման գործընթացում: Իհարկե կան հասկանալի պատճառներ, թե ինչու են ուսուցիչները խուսափում նոր տեխնոլոգիաներ կիրառել իրենց դասերի ընթացքում: Հաճախ ուսուցիչները վստահ չեն նորամուծության օգտակարության վեաբերյալ: Սա է պատճառը, որ ուսուցիչների մեծ մասը կառչում է իր նախկին գիտելիքին և փորձին՝ այսպիսով արհամարհելով ճիշտ տեխնոլոգիաների կիրառման առավելությունները դասավանդման և սովորելու գործընթացում:

Այնուամենայնիվ, ժամանակակից սովորողին այլևս չեն գոհացնում ավանդական ուսուցման մեթոդները: Սովորողներին դասապրոցեսին ներգրավելու , նրանց մոտիվացնելու համար ուսուցիչը պարտավոր է գիտակցել տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորությունը լեզվի ուսուցման գործընթացում:

ՏՀՏ գործիքները `որպես ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ

- **Լավագույն փոխլրացնող գործիքն է ուսուցիչների համար դասարանում**

Այսօր կրթական տեխնոլոգիաները շատ առումներով ձեռնտու են ուսուցիչներին: Ավանդական կրթությունն այլևս այնքան էլ արդյունավետ չէ, և ուսուցիչները պետք է ավելի քան երբևէ մոտիվացնեն իրենց աշակերտներին դասարանում որևէ նյութ ներկայացնելիս: Գրքերը մղվել են երկրորդ պլան, և նոր տեխնոլոգիաների առկայությամբ դասերը կարող են լինել շատ ավելի հարուստ բովանդակությամբ և ավելի մասնակցային, քան նախկինում:

«Ինչու է ուսուցիչների վերապատրաստումը հանդիսանում կրթական գերազանցության հիմնական գործոն» Dexway-ի մեթոդաբանությանն օգնում է կրթական կենտրոններին կիրառել խառը ուսուցման մեթոդ, որը մեծ հաջողություն է գրանցել դասարանում: Այն ուսուցչին զինում է անգլերենի դեմ առ դեմ դասեր անցկացնելու ամբողջական ձեռնարկով, անսահմանափակ վարժություններով և վարժություններով բոլոր մակարդակների և դասերի համար, նպատակ ունենալով, որ ուսանողները շատ ավելի ակտիվ և ներգրավված լինեն դասարանում:

- **Լեզվի ուսուցման գործընթացում տեխնոլոգիաները խթանող միջոցներ են աշակերտների համար**

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ինչպես դասարանում, այնպես էլ դասից դուրս ստիպում է աշակերտներին ավելի մոտիվացված լինել՝ օգտագործելով այնպիսի սարքեր, որոնցով նրանք կարող են լեզվական վարժություններ կատարել՝ ինչպիսիք են ձայնի ճանաչումը, ինտերակտիվ մուլտիմեդիա վարժությունները և այլն: Դեռահաս աշակերտների համար շատ

ավելի խթանող է պլանշետով կամ սմարթֆոնով կատարած վարժությունները, քան ավանդական դասագրքով: Այսպիսի ուսուցման ձևը աշակերտին պասիվ ստացողից վերածում է ակտիվ սովորողի՝թույլ տալով ավելի խորանալ դասապրոցեսի մեջ: Սովորողները կարող են սովորել իրենց անգլերենի դասընթացը՝ օգտագործելով մի շարք համապարփակ հավելվածներ, որոնք ունակ են համաժամանակ աշխատանք կատարել նույնիսկ առանց ինտերնետի:

- **Հեշտացնում է սովորողի առաջադիմության կառավարումն ու վերահսկումը**

Սովորողների խմբերի ցուցակների կազմումն ու պահպանումը, դասընթացների կառավարումը, սովորողներին թեստերով և քննություններով գնահատելը այսօր կառավարվում են առցանց կրթական հարթակների շնորհիվ, որոնք առաջարկում են կրթական գործընթացին ուղղված անթիվ գործառույթներ:

Այսօր կրթական գործընթացում կիրառվում են այնպիսի գործիքներ, որոնք թույլ են տալիս ուսուցիչներին ձևավորել իրենց թեստերը, մասամբ կամ ամբողջությամբ, ընտրել անգլերենով թեստեր հազարավոր ուսուցիչների փորձից , ձևափոխել և հարմարեցնել իրենց դասերին, ինչպես նաև կարող են ստեղծել ինքնուրույն:

Այսպիսի առցանց ՏՀՏ գործիքներ են Quizzes-ը, Microsoft Forms-ը, Socrative-ը և այլն: Երբ աշակերտներն անցնում են այս թեստերը, դրանք վերլուծության են ենթարկվում: Այս կերպ կարելի է տեսնել, թե արդյոք նպատակները ձեռք են բերվել, որպեսզի առաջարկվեն գործողություններ կամ վարժություններ, որոնք պետք է վերանայվեն դասարանում: Դասարանում անգլերեն սովորելը շատ ավելի արդյունավետ է, երբ համալրվում է կրթական տեխնոլոգիաներով:

Ահա երկու նախնական թեստային առաջադրանքներ, որոնք կազմվել են Quizzes ծրագրով և խաղային միջավայր ստեղծելով աշակերտին անկախ իրենց կամքից ներգրավում են դասապրոցեսի մեջ: Այս թեստերը կարող են օգտագործվել և' համաժամանակյա, և' տարժամանակյա առաջադրանքների տեսքով :

Թեստը կազմված է անգլերենի դասաժամին գոյականի թվի ուսուցումից հետո գիտելիքների ստուգման համար;

- կազմած թեստը կարող ենք արտահանել և' QR կոդով, որը հնարավոր է տպել , որպես թեստային առաջադրանք,

- և համաժամանակյա մուտք գործել համապատասխան կրթական միջավայր հղումների օգնությամբ:

https://quizizz.com/join?gc=58118547, որի կատարումից հետո, ուսուցիչն հնարավորություն է ունենում ամփոփել արդյունքները, և տալ կատարված աշխատանքի գնահատականը, նկատել նյութի յուրացման հետ կապված թերացումները, ծնողներին ուղարկել աշակերտների գրանցած արդյունքները:

Rank	First Name	Last Name	Attempt #	Accuracy	Score
1	Naira		6	100 %	5870
2	Զոյա	Գեւորգյան	6	100 %	5810
3	Միլենա	Համբարձումյան	6	100 %	5360
4	Լիանա*		6	100 %	5100
5	Narek	hakobyan	6	83 %	4450
6	Միլենա	Հովակիմյան	6	66 %	3190
7	Axas		6	50 %	2890
8	Vitya		6	50 %	2360
9	Մարիամ		6	50 %	2330
10	Koryun		6	33 %	1900
11	Karen	Styopa	6	33 %	1500
12	Milena	Petrosyan	5	16 %	920
13	Arsen		6	16 %	800

- *Ստեղծում է եզակի փորձ թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի համար*

Անգլերենի դասընթացներում **շրջված դասարանի** մեթոդը, դասերը վերածում են այնպիսի միջավայրի, որտեղ խրախուսվում են մտքերով կիսվելը, բանավիճելը, կարծիքներ ստեղծելն ու ձևավորելը: Արդյունքում ստեղծվում է մի տարածք, որը շատ ավելի ստեղծագործ և մասնակցային է: Անգլերենի դասերը դադարում են լինել ձանձրալի և անտարբեր, երբ ուսուցիչը պարզապես գրատախտակի մոտ ինչ-որ բան էր բացատրում, և դառնում են շատ ավելի ակտիվ բոլոր իմաստներով:

Վիրտուալ գրատախտակների միջոցով, ինչպիսին են Microsoft Whiteboard-ն ու Padlet-ը, սովորելը ավելի հեշտ է, սովորողները շատ ավելի ներգրավված են, իսկ առցանց վարժությունները և ինտերակտիվ մուլտիմեդիայի կիրառումը նրանց համար մոտիվացնող են:

Այսպիսով՝ անգլերենում գոյականի թվի ուսուցման համար, **շրջված դասարան** մեթոդի կիրառմամբ, աշակերտներին նախապես ուղարկում եմ իմ կողմից ստեղծված վիրտուալ գրատախտակը, ինչպես նաև YOUTUBE-յան իմ ալիքում տեղադրված ուսումնական նյութը: https://youtu.be/VYF5OZWPsjo

Սովորողները տանը նախապես ծանոթում են հաջորդ դասի նյութին.

1. դիտում են տեսանյութը,
2. ուսումնասիրում են վիրտուալ գրատախտակը,
3. կատարում են տեսանյութի հետ զուգահեռ ներկայացված նախաթեստը, որի արդյունքները հայտնվում են ուսուցչի մոտ:

Այստեղ ամենակարևորը անմիջական արձագանքն է, որը հայտնվում է աշակերտի մոտ: Այն խրախուսում է նրանց, նրանք փորձում են թեստը կատարել այնքան ժամանակ, մինչև հասնեն առավելագույն միավորին: Այս գործընթացում աշակերտն ինքն է պատասխանատվություն ստանձնում իր ուսման համար և չի պահանջում, որ ամեն ինչ գնահատվի ուսուցչի կողմից:



Արդեն դասարանում, ուսուցիչը հարցերի միջոցով, տեսանյութը ևս մեկ անգամ դիտելով վեր է հանում այն կետերը, որոնք աշակերտները դժվարացել են սովորել: Քննարկելուց հետո, աշակերտներն արդեն կատարում են ևս մեկ թեստային աշխատանք: Որպես կանոն 60% արդյունավետություն ցուցաբերած թեստը, շրջված դասարան մեթոդի կիրառումից հետո, բարձրանում է մինչև 90% և ավելի:

socrative

Name _____
Date _____

Comparison of adjectives.

Score _____

1.

Write the comparative form of "good"

(A) best
(B) worse
(C) worst
(D) better

2. She is the more beautiful girl of our classroom.

(T) True
(F) False

3. Write the superlative form of "clever".

4. I am ... than my sister.

(A) tall
(B) the tallest
(C) taller
(D) tallerly

5. What is the positive degree of the adjective "worse"?

Socrative առցանց հարթակի հնարավորությունների օգտագործմամբ ստեղծված թեստ է, որը կարողանում ենք արտահանել և տպել, այսպիսով

թեմատիկ աշխատանքները կարող ենք ստեղծել այս հարթակում՝ օգտագործելով առկա ուսումնական ռեսուրսները:

- ***Խթանում է ինտերակտիվությունն ու համագործակցությունը ուսուցման ընթացքում***

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս աշակերտներին լինել շատ ավելի ստեղծագործ և մասնակցող դասարանում: Նրանք գիտելիքների հիմքը պատրաստում են դասարանից դուրս՝ ներառելով դասընթացի ողջ բովանդակությանը: Երբ սովորողները գալիս են դասարան, նրանք կիսում են այս գիտելիքները մնացած աշակերտների և ուսուցչի հետ՝ ցույց տալու, թե ինչ են սովորել և ամրապնդում են ուսումնասիրված նյութը համակարգված ձևով: .

Կրթական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցիչներին շատ ավելի լավ պատրաստված լինել դասին, և տրամադրում են գրավիչ ռեսուրսներ՝ իրենց դասերը շատ ավելի անմիջական ու ակտիվ դարձնելու համար, որտեղ բոլոր ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու՝ անկախ իրենց մակարդակից:

Ավանդական ուսուցմանը զուգահեռ օգտագործելու դեպքում՝ անգլերենի ուսուցումը մեկ քայլ առաջ կգնա՝ ուսուցման գործընթացը դարձնելով ավելի բազմազան և մատչելի սովորողի համար:

Մնում է միայն ցանկություն, նորը ընդունելու, կիրառելու և աշխատանքային փորձում ներդնելու: Մեկ անգամ մենք ռեսուրս ստեղծելով՝ ապահովում ենք ինքներս մեզ լրացուցիչ նյութերի մեծ պաշարով, որոնք հնարավորինս հեշտացնում են մեր աշխատանքը, խնայում են նոր թեմայի համար նախատեսված ժամանակը, հնարավորություն են տալիս աշակերտին քննադատաբար մոտենալ դասին:

Ստորև տեղադրում եմ իմ YOUTUBE-յան ալիքից մի քանի հղումներ, որոնց յուրաքանչյուր համար առկա են նաև թեստեր Quizzes հարթակում:

https://youtu.be/C0ceGCaU9Z0 - Past Simple / 5th grade/

https://youtu.be/QzU50Hrk5kc Present Simple vs Present Continuous/ 4-5th grade/

https://youtu.be/ZgE4kmuOY4g Travelling

Տեխնոլոգիաների օգտագործումը անգլերեն լեզվի դասաժամին արդյունավետ գործիք է սովորողների համար: Սովորողները պետք է օգտագործեն տեխնոլոգիաները՝ որպես իրենց ուսումնական գործընթացի զգալի մաս: Ուսուցիչները պետք է մոդելավորեն տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական ծրագրին աջակցելու համար, որպեսզի սովորողները կարողանան կարևորել տեխնոլոգիայի իրական օգտագործումը իրենց լեզվական հմտությունները կատարելագործելու համար (Costley, 2014; Murphy, DePasquale, & McNamara, 2003):

Սովորողների համագործակցությունը կարող է ընդլայնվել տեխնոլոգիայի միջոցով: Համագործակցությունը սովորելու կարևոր գործիքներից է: Սովորողները համագործակցում են՝ առաջադրանքներ ստեղծելու և միմյանցից սովորելու համար՝ կարդալով իրենց հասակակիցների աշխատանքը (Keser, Huseyin, & Ozdamli, 2011):

Այս առումով հարցումները հենց մեր դպրոցի շրջանակներում ցույց տվեցին, որ աշակերտներն ավելի սիրով են մասնակցում են այն դասերին, որոնց ընթացքում կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, դա մոտիվացնում է նրանց: Նրանք նույնպես դառնում են դասապրոցեսի ակտիվ մասնակից, փնտրում և գտնում են պահանջված նյութեր, կազմում թեստեր և փոխանցում դասընկերներին: Դերային խաղի միջոցով/ role playing / հաճախ հայտնվում են ուսուցչի դերում՝ բացատրելով դասն ու ներգրավվելով դասապրոցեսի մեջ:

Անգլերենի դասավանդման համար ամենաարդյունավետ առցանց գործիքները

Տեխնոլոգիայով Անգլերեն դասավանդելը միայն նոթբուք և պրոյեկտոր օգտագործելը չէ՝ **powerpoint**-ի սահիկաշարերի ցուցադրությամբ, ուստի այստեղ ներկայացված են լավագույն առցանց գործիքները անգլերենի դասավանդման համար, , որոնք կարող են օգտագործվել դասերն ավելի ներգրավվող դարձնելու համար:

- 3.1 1. Quizlet
- 3.2 #2 Kahoot
- 3.3 #3 Quizziz
- 3.4 #4 ClassMarker
- 3.5 #6 Google Forms
- 3.6 #7 Microsoft Forms
- 3.7 #8 Your StocK Music Player
- 3.8 #9 Collage Maker App
- 3.9 #10 Phone Audio Recorder
- 3.10 #11 GoConqr
- 3.11 #12 WordSalad
- 3.12 #13 Quill
- 3.13 #14 CrossWord Labs
- 3.14 #15 Socrative
- 3.15 #16 Plickers
- 3.16 #17 StoryBird
- 3.17 #18 Powtoon
- 3.18 #19 Pixtoon
- 3.19 #20 Memrise
- 3.20 21: My Free Bingo Cards
- 3.21 #22 Duolingo
- 3.22 #23 Vocaroo
- 3.23 #24 Flippity

- 3.24 #25 Quik
- 3.25 #26 Edmodo
- 3.26 #27 Instagram
- 3.27 #28 Youtube
- 3.28 #29 Padlet
- 3.29 #30 Voki
- 3.30 #31 Mentimeter
- 3.31 #32 Word it Out
- 3.32 #33 Fake Chat Conversations Apps

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված օրինակներից ու դասավանդման փորձից կարող ենք գալ եզրակացության,որ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս ուսուցիչներին ավելի արդյունավետ ու մատչելի մատուցել նյութը լսարանին թե՛ առկա, թե՛ հեռավար տարբերակով :
2. Այն անսահմանափակ ռեսուրսների դռներ է բացում ուսուցիչների առաջ և խթանում ուսուցիչ- աշակերտ համագործակցությունը:
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով ուսուցիչները ավելի են մոտիվացնում աշակերտներին և ինտերակտիվ ու գրավիչ դասավանդման նոր ձևերով՝ լրացնելով դասավանդման ավանդական մեթոդներին, ուժեղացնում են ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
4. Թվային տեխնոլոգիաները զարգացնում են ավելի լավ ուսուցիչ-սովորող հարաբերություններ

Տեղեկատվական տեխնոլոգիաները խրախուսում են սովորողներին սովորել անհատապես և ձեռք բերել պատասխանատու վարքագիծ՝ զարգացնել ավելի բարձր կարգի մտածողության հմտություններ: Նրանք օգնում են սովորողներին լուծել իրենց ուսման դժվարությունները և գտնել մեթոդներ՝ օգտագործելու այն, ինչ սովորել են արդյունավետ և իմաստալից ձևերով:

Ուսուցիչները պետք է համոզված լինեն տեղեկատվական տեխնոլոգիայի օգտակարության և առավելությունների մեջ՝ սովորողների ուսումը բարելավելու համար: Սա նշանակում է, որ ուսուցիչները կարիք ունեն աջակցության և վերապատրաստման՝ տեղեկատվական տեխնոլոգիաները լեզուների ուսուցման մեջ ինտեգրելու համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը առանցքային դեր է խաղում լեզվի ուսուցման մեջ՝ սովորողների մոտ ստեղծելով բարձր մոտիվացիա՝ արդյունավետ սովորելու համար:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ տեղեկատվական տեխնոլոգիաններն ապահովում են անընդհատ փոխազդեցություն ուսուցիչների և սովորողների միջև, օգնում են սովորողներին զարգացնել մտածողության հմտությունները, ուսումն ու ուսուցումը դարձնում են ավելի աշակերտակենտրոն, նպաստում են սովորողների ինքնավարությանը և օգնում նրանց: Ամենակարևորը, մեծացնում են սովորողների մոտիվացիան՝ արդյունավետորեն անգլերեն սովորելու համար:

ՕԳՏԱՎՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Eady, M. J., & Lockyer, L. (2013). Tools for learning: technology and teaching strategies: Learning to teach in the primary school. Queensland University of Technology, Australia. pp. 71-89.

Eaton, S. E. (2010). Global trends in language learning in the twenty-first century. Calgary, Canada: Onate Press.

Հավելվածներ

http://www.directenglish.com/8-benefits-integrating-online-platforms-blended-english-language-teaching-elt-programs/

https://files.eric.ed.gov/fulltext/ED510276.pdf

https://englishpost.org/tools-teach-english-technology/#33_Tools_to_Teach_English_with_Technology

https://scholars.uow.edu.au/display/publication76376